3. *Աշտարակի քաղաքային զբոսայգու առկա լողավազանի և հարակից տարածքի շենք-շինությունների վերակառուցում և բարեկարգում*

Համայնքի արտաքին տեսքի բարեկարգման, քաղաքն ավելի հրապուրիչ դարձնելու, համայնքի բնակիչների և համայնք այցելող հյուրերի հարմարավետության ու ժամանցի համար բարենպաստ պայմաններ ապահովելու, ինչպես նաև համայնքի զբոսաշրջության գրավչության բարձրացման նպատակով անհրաժեշտ է շարունակել համայնքի քաղաքային զբոսայգու բարեկարգման և առկա ենթակառուցվածքների վերագործարկման աշխատանքները:
2017թ.-ից սկսած համայնքն իր սեփական, իսկ 2019թ.-ից նաև պետական սուբվենցիայի միջոցներով իրականացնում է համայնքի մոտ 7 հա մակերեսով զբոսայգու կանաչապատման, բարեկարգման, առանձին հատվածների կառուցման, լուսավորության համակարգի բարեփոխման և այլ աշխատանքները:
Քաղաքային զբոսայգին գտնվում է անմիջապես քաղաքի սրտում, զբաղեցնում է մոտ 7 հա տարածք: Կադաստրային գոտիավորման արդյունքում բաժանված է մի քանի մասերի, որոնց նկատմամբ առկա են սեփականության գրանցման վկայականները: Խորհրդային տարիներին այն եղել է բնակիչների ու քաղաքի հյուրերի համար հանգստի ու ժամանցի նախընտրելի վայր: Կրելով Կոմիտասի անունը, զբոսայգում տնկված են եղել միայն ծիրանենիներ, որոնք 1990-ական թվականների էներգետիկ ճգնաժամի արդյունքում հարակից բազմաբնակարան շենքերի բնակիչների կողմից կտրվել և օգտագործվել են որպես վառելափայտ:
Այստեղ է գտնվում Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշակոթողը, ժամանակին գործել են բացօթյա լողավազանն ու ամառային կինոդահլիճը: Զբոսայգում կային նաև այլ ջրային տարածքներ՝ ջրավազաններ, շատրվաններ, արհեստական լճակներ, որոնք ամռան ամիսներին ապահովում էին միկրոկլիմայի փոփոխություն, իսկ երեխաների, պատանիների և երիտասարդների համար նաև հանգստի և ազատ ժամանակի նպատակային օգտագործման վայր:

Քաղաքային զբոսայգին փռված է Քասաղի կիրճի երկայնքով և ձգվում է դեպի հյուսիս՝ ապահովելով բնական ամֆիթատրոնային վիճակ: Ընդհանուր տարածքը իրարից բաժանվում է կենտրոնական փողոցներով և իրար միանում է միայն մեկ հետիոտնային կամրջակով:
Զբոսայգում 2017-2019 թթ.-ներին կատարվել են կապիտալ աշխատանքներ, որոնց թվում է որոշ ճեմուղիների վերականգնումը, մանկական խաղահրապարակի կառուցումը, ոռոգման համակարգի որոշ հատվածի վերականգնումը, ծառատունկը և այլն:
Զբոսայգին վերջնական տեսքի բերելու համար պետք է նախատեսել կառուցապատման և կանաչապատման շարունակական ծրագրեր:
Զբոսայգու այդ հատվածը՝ ք.Աշտարակ, Տիգրան Մեծի 2 հասցեում է և կազմում է մոտ 5000 քմ:
Ներկայումս համայնքապետարանի կողմից իրականացվում են աշխատանքներ՝ նշված տարածքի մաքրման, կանաչապատման և բարեկարգման ուղղությամբ:

Նախատեսվում են հետևյալ աշխատանքների իրականացումը՝
1. Գոյություն ունեցող լողավազանի և նրան պատկանող հարակից շինությունների վերակառուցում և վերանորոգում, այդ թվում՝

- Լողավազանի հիմնանորոգում,
- Տարածքում գտնվող հանդերձարանի և շենք-շինությունների ուժեղացում և սեյսմազինվածության ավելացում,
- Հանդերձարանի կապիտալ հիմնանորոգում,
- Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցում,
- Ֆիլտրային համակարգի մոնտաժում,
- Տարածքի լուսավորության համակարգի վերականգնում,
- Պարիսպների ուժեղացում և բարեկարգում դեկորատիվ միջոցներով,
- Լողավազանի ծառայությունների իրականացման նպատակով համապատասխան գույքով ապահովում (նստարաններ, տապչաններ, աթոռներ և այլն):
- Ներքին սառը և տաք ջրամատակարարման, ջեռուցման, էլ.մատակարարման, գազամատակարարման, օդափոխության, հակահրդեհային ազդանշանման, տեսահսկման, կապի, ջրահեռացման նոր համակարգերի կառուցումը:

2. Գոյություն ունեցող ջրավազանների բարեկարգում, շատրվանների իրականացման համար պոմպային համակարգի մոնտաժ,
3. Հարակից տարածքների սալապատում և ճեմուղիների իրականացում տուֆի և բետոնի սալիկներով,
4. Բացօթյա կինոյի շենքի արտաքին հատվածների վերանորոգում:

Վերանորոգվող բոլոր տարածքներում նախատեսվում են հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժման համար անհրաժեշտ միջոցառումներ և նախագծային լուծումներ, ինչպիսիք են թեքահարթակները, բազրիքներ և այլն:

Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք բարեկարգ և հրապուրիչ ջրային տարածքներ, որոնք իրենց տեսքով և բովանդակությամբ լիովին համահունչ կլինեն ժամանակի պահանջներին և կդառնան քաղաքի բնակիչների, հյուրերի և զբոսաշրջիկների համար ազատ ժամանցի կազմակերպման և հանգիստն անցկացնելու վայրեր: Նախատեսվում է հիմնովին վերանորոգել մոտ 135 քմ, 141.3 քմ, 20.6 քմ մակերեսներով արհեստական լճակները և 818 քմ մակերեսով բացօթյա լողավազանն իր 141.3 քմ մակերեսով հանդերձարանային մասնաշենքով:
Զբոսայգու այդ հատվածի վերականգնմամբ համայնքում կխթանվի նաև առողջ ապրելակերպը, կզարգանա ընտանեկան տուրիզմը:
Զբոսայգու ծրագրի իրականացումը կնպաստի նաև քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Ծրագրի արժեքը՝ 200.000.000 *ՀՀ դրամ, որից համայնքի ներդրում 140.000.000 ՀՀ դրամ*
Աշխատանքների կատարման ժամկետը՝ հունիս, 2020- **դեկտեմբեր**, 2020**:**